ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՐԲԵՐԱՆԳՆԵՐՈՎ

1 9 Սայաթ Նովա, Երեւան
Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

«Հոլանդական հիվանդություն». տեղեկանք

Տնտեսագիտական մտքի պատմության մեջ այս եզրը մտավ նախորդ դարի կեսերին՝ կապվելով Հյուսիսային ծովի՝ Հոլանդիային պատկանող հատվածում բնական գազի հանքավայրերի գործարկման հետ: Դրան հետևած բնական գազի արտահանման աճը հանգեցրեց ազգային արժույթի արժեվորման, ինչը բացասաբար անդրադարձավ տնտեսության՝ արտահանման ուղղվածություն ունեցող մյուս ճյուղերի վրա: Արդյունքը՝ ազգային տնտեսության մրցունակության անկում: Բացասական հետևանքները ծավալվեցին բազմաթիվ ուղղություններով՝ ախտահարելով սոցիալական, կրթական համայնապատկերը, խնայողությունների և ներդրումների տրամաբանությունը և որդեգրած բազմաթիվ այլ խաղի կանոններ:

Մեր տնտեսությունը հիվանդ է... հոլանդական հիվանդությամբ

Կասեք «նոնսենս» է. մենք նավթ չունենք: Կասեմ ունե՛նք, մեր «նավթը» երևակայական է, ոչ շոշափելի: Մեր «նավթը» սեր է, ընտանիքի հանդեպ նվիրում, ծնողի հանդեպ պատասխանատվություն, մեր «նավթը» կարեկցանք է, խնդրանք, պետական մակարդակով հայց, որ արտահանում ենք լիուլի ու վարձատրվում: Իսկ փոքր տնտեսության ծավալներին համեմատական «նավթային» դոլարների ներհոսքը շարունակաբար խորացնում(ելու) է պաթոլոգիական միտումները: Արժեվորվող դրամը հարվածում է արտահանման ուղղվածություն ունեցող՝ նոր-նոր ոտքի կանգնող ճյուղերին, ավելի ու ավելի մրցունակ դառնող ներմուծումը վտանգում է անգամ ներքին շուկայի հասանելիությունը տեղական արտադրողի համար: Եթե սա նույնիսկ դեռ ակնառու չէ, միևնույն է՝ զսպանակը պրկվում է: Բոլոր ախտանշանները մեկ բան են պնդում. ախտորոշումը՝ *հոլանդական հիվանդություն*:

Հիվանդությունը բուժում է պահանջում, իսկ ցանկացած բուժում սկսվում է նախ հիվանդ լինելը գիտակցելով/ընդունելով:

Այս անգամ էլ «մերն ուրիշ է»

Եթե անգամ ոչ մահացու, հոլանդական հիվանդությունը խիստ վտանգավոր է, բայց և կանխամշակված լուծումներ ունի: Նավթարդյունահանող երկրներում ստեղծվում են նավթային հիմնադրամներ, պահուստային համակարգեր, որոնց միջոցով փորձում են արտարժութային մեծածավալ մուտքերի հիմնավորված կառավարում և երկարաժամկետ ծրագրեր իրականացնել, տնտեսության այլ ճյուղերի խրախուսման մեխանիզմներ կիրառել և այլն:

Միջազգային փորձը, սակայն, մեր դեպքում կարծես տեղին չէ: Ի տարբերություն այլ երկրների կենտրոնացված մատակարարումների ու դրանց դիմաց կանոնակարգված վճարումների մեխանիզմի, մենք «նավթ» ենք արտահանում դույլերով ու սրվակներով, իսկ պետական կամ մասնավոր մեկ կամ մի քանի կորպորացիաների, փոքրաթիվ էլիտայի փոխարեն մեր երկրում «նավթարտահանողները» տատիկներ ու պապիկներ են, կանայք ու երեխաներ: Նման պայմաններում թե՛ մոտեցումները, թե՛ լուծումները նորովի պիտի լինեն: Չէ որ միշտ էլ առկա է ախտորոշման գործընթացի հետևանքով բուժման նոր մեթոդների կիրառման հնարավորություն, մանավանդ երբ բուժման արդյունքները բավականաչափ շոշափելի են մռայլ կանխատեսումների ֆոնի վրա:

Ստեղծագործ տնտեսագետների ժամանակը

Հայ տնտեսագիտական մտքի առջև այսօր, փաստորեն, նոր մարտահրավեր է կանգնած: Գտնել հազարավոր փոքր աղբյուրներով հոսող խոշոր արտարժութային մուտքերի հնարավոր կառավարման (ոչ թե գլխատման) մեխանիզմը, օգտագործել այն քիչ հնարավորություններից մեկը, երբ միջազգային փորձը տեղայնացնելու փոխարեն հարկ է նոր լուծումներ գտնել, նոր առաջարկություններով հանդես գալ: Քաղաքականության առաջնորդներն իրավունք ունեն քաղաքականապես գրագետ բացատրություններով պարսպապատվել, քաղաքականության բուն մշակների համար դա մահացու է: Բոլոր տնտեսությունների պատմություններն էլ գրված են ոչ միայն սև, այլ նաև կարմիր թանաքով. դրանցում միշտ էլ առկա են ոչ միայն հաստ դրամապանակներ ու հարուստ բանկային հաշիվներ, այլև տապալումներ ու ողբերգություններ: Դրամի արժեվորման քաղաքականապես գրագետ պաշտոնական բացատրություններից, կարծես, «կարմիրի» հոտ է գալիս… Եթե նույնիսկ հնարավոր վտանգների լրջությունը չի սթափեցնում, ապա առնվազը մասնագիտական տարերքը պիտի որ հանգիստ չտա: *Մեր տնտեսությանն արտարժութային հոսքերի կառավարման նորարարական մեխանիզմ է պետք. մենք «նավթ» արտահանող երկիր ենք, և պիտի ըստ այդմ կառուցենք մեր քաղաքականությունը:*

Համառոտագիրը մշակվել է ՄՁՄԿ 2006թ-ի հունիսի 9-ին կայացած՝ «ՀՀ Դրամի արժեվորում. նախադրյալներ, հետևանքներ» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի աջակցությամբ: